[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
24	Հունվար	2019 թ.		Բ	1592155263
[4] Մատուցման ամսաթիվը					
20	Դեկտեմբեր	2018 թ.		Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Փորձագիտական եզրակացություն N 03421801

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	8	1	8	7	7

[9] Անվանումը	«ԷՔՍՊԵՐՏ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)	
[10] Բանկային տվյալները	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ ՇԵՆԳԱՎԻԹ Մ/Ճ	N 220098531571000
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 16/35	
[12] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3

[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ		
[15] Բանկային տվյալները	ՖՆ աշխատակազմի Գործառնական Վարչություն	N 900011000834	
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		
[17] Լրացուցիչ տվյալներ			
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	դատաշինարարատեխնիկական և դատապրանքագիտական փորձաքննություն		1	50000	50000
Ընդամենը					50000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ BAGHDASARYAN ARAKSYA 5910870025

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

24/01/2019 16:26:04

ՈՐՈՇՈՒՄ
Դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

29 նոյեմբերի 2018թ. ք. Ստեփանավան

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ս.Վ.Սերոբյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 53158918 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի սեպտեմբերի 16-ին ՀՀ ոստիկանության Ստեփանավանի բաժին ստացվել է ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված Լոռու մարզի Ամրակից գյուղի բնակիչ՝ Շուշանիկ Մելսիկի Իսպիրյանի դիմումն այն մասին, որ վերջինս 2018 թվականի ապրիլի 14-ին Լոռու մարզի Ամրակից գյուղում գտնվող, իրեն պատկանող առանձնատունը մաս-մաս վճարելու պայմանով 4000 ԱՄՆ դոլլարով /1.931.680 ՀՀ դրամով/ վաճառել է Գյումրի քաղաքի բնակիչ՝ Լևոն Գառնիկի Սիմոնյանին: Ըստ պայմանավորվածության հիշյալ 4000 ԱՄՆ դոլլարի 2000 ԱՄՆ դոլլարը /965.840 ՀՀ դրամ/ Լևոն Սիմոնյանը պետք է վճարեր 2018 թվականի հունիս ամսին սակայն վճարել է ընդհամենը 200 ԱՄՆ դոլար /96.584 ՀՀ դրամ/ և քանդել առանձնատունը: Լևոն Գառնիկի Սիմոնյանը Շուշանիկ Իսպիրյանի վստահությունը չարաշահելու եղանակով տիրացել է վերջինիս գույքին պատճառելով 3800 ԱՄՆ դոլարին համարժեք, խոշոր չափերի՝ 1.835.096 ՀՀ դրամի նյութական վնաս:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Շուշանիկ Իսպիրյանը բացատրություն է տվել, որ վերոհիշյալ 200 ԱՄՆ դոլարը Լևոն Սիմոնյանը իրեն վճարել է 2018 թվականի հուլիսին պարտավորվելով ևս 500 ԱՄՆ դոլար /241460 ՀՀ դրամ/ վճարել 2018 թվականի օգոստոսին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում կատարված որոնողական աշխատանքների արդյունքում Լևոն Սիմոնյանը չի հայտնաբերվել:

Դեպքի առթիվ 2018 թվականի սեպտեմբերի 26-ին ոստիկանության Ստեփանավանի բաժնում հարուցվել է թիվ 53158918 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:

2018 թվականի սեպտեմբերի 26-ին որոշում է կայացվել թիվ 53158918 քրեական գործը քննիչին հանձնելու մասին և նույն թվականի հոկտեմբերի 2-ին մուտքագրվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժին և ընդունվել վարույթ:

Նախաքննությամբ պարզվել է, որ Շուշանիկ Իսպիրյանին պատկանող՝ Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող առանձնատունը Լևոն Սիմոնյանի կողմից ամբողջությամբ քանդվել է 2018 թվականի մայիսի 5-ին:

Դեպքի վայրի զննությամբ պարզվել է, որ Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 4 հասցեի տան բակում առկա է աղյուսներից կառուցված տան հիմք, որի հյուսիս-արևմտյան անկյունում առկա են տուֆ քարից կառուցված 2,1Х3մ և 2,7,3,5Х չափերի պատեր: Տան հիմքի կենտրոնական մասում առկա է ծխնելույզի խողովակ: Տունը ամբողջովին բացակայում է: Տան բակի հարավային կողմում առկա է 6Х4 մ կողային չափերով մեկ հարկանի ցախանոց:

Նախաքննությամբ ձեռք բերված տվյալների և ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տեղեկատվական կոնտրոնից ստացված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենով պարզվել է, որ Շուշանիկ Իսպիրյանին պատկանող՝ Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 4 հասցեի առանձնատունը իրենից ներկայացրել է մեկ հարկանի փայտաշեն տուն, ասբեստե շիֆերարածք տանիքով, կառուցվել է 1988 թվականի երկրաշարժից հետո, ունեցել է նախասրահ, միջանցք, 2 ննջասենյակ և հյուսրասենյակ: Տան

ընդհանուր մակերեսը կազմել է 62,4 քմ, ցախանոցի մակերեսը կազմում ՝ 24,0 ք.մ, իսկ հողամասի չափը կազմում է 0,07 հա:

Տուժող Շուշանիկ Իսպիրյանը իր ցուցմունքում հայտնել է, որ իրեն պատկանող հիշյալ տունը կառուցվել է 1988 թվականի երկրաշարժից հետո, տիպային նախագծով, ինչպես և հիշյալ փողոցում գտնվող մնացած տները, այդ թվում Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 3 հասցեում գտնվո Սուսաննա Մովսիսյանի տունը, կամ Լյովա Գրիգորյանի տունը: Շուշանիկ Իսպիրյանը նշել է նար, որ իր տան ընդհանուր կառուցվածքը, բացառությամբ հյուսիս-արևմտյան անկյունում տուֆ քարից կառուցված հատվածից, որը չի ունեցել հատակ, իսկ տանիքը եղել է ասբեստե շիֆերածածք, չի ձևափոխվել, միայն շուրջ 10 տարի առաջ պատերին փակցվել են պաստառներ, ներկվել է առաստաղը և հատակը:

Նկատի ունենալով, որ տուժող Շուշանիկ Իսպիրյանին պատկանող՝ Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող առանձնատան քանդման հետևանքով նրան պատճառված նյութական վնասի չափը և առանձնատան արժեքը պարզելու, ինչպես նաև քրեական գործի համար նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական բնագավառների հատուկ գիտելիքներ և հաշվի առնելով, որ ՀՀ ԱՆ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հիշյալ բնագավառների մասնագետները ծանրաբեռնված են, անհրաժեշտ է համալիր դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննությունը նշանակել փորձագիտական հիմնարկից դուրս և դրա կատարումը հանձնարարել «Էքսպերտ փորձագիտական կենտրոն» ՍՊ ընկերության փորձագետներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-246 և 249 հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Սույն քրեական գործով նշանակել համալիր դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Էքսպերտ փորձագիտական կենտրոն» ՍՊ ընկերության փորձագետներին:

Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 և 342 հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Փորձաքննությանը ներկայացնել սույն որոշման օրինակը, դեպքի վայրը՝ Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան բակը, բակում գտնվող ցախանոցը: Ներկայացնել Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 3 հասցեում գտնվող նմանատիպ տունը:

Պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցերը.

1. Որքան է կազմել Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող տան (տուն, հողամս, ցախանոց և այլն) շուկայական արժեքը (մինչև բնակելի տան քանդելը) 2018 թվականի ապրիլ և մայիս ամիսներին:
2. Որքան է կազմում Լոռու մարզի Ամրակից գյուղի 3-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող հիմնական շինության (բնակելի տան) քանդելու հետևանքով տուժողին պատճառված նյութական վնասի (վերարտադրման արժեքը) չափը 2018 թվականի ապրի և մայիս ամիսների դրությամբ:

Փորձագետներին իրավունք է վերապահվում պատասխանել նաև այն հարցերին, որոնք չեն առաջադրվում, բայց կարող են էական նշանակություն ունենալ քրեական գործի հետագա ընթացքը լուծելու համար:

ՀԿԳ քննիչ, արդարադատության
երրորդ դասի խորհրդական՝ **Ս.Վ.Սերոբյան**